



ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՐԱԳՈՒՅՆ ԴԱՏԱՐԱՆ

ԼՂՀ ընդհանուր իրավասության
առաջին ատյանի դատարանի վճիռ
վարչական գործ թիվ 0084/05/2010թ.
դատավոր՝ Ա.Թադևոսյան

Վարչական գործ թիվ 0084/05/2010թ.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀԱՆՈՒՆ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

29-ին հունիսի 2010թ.

ք.Ստեփանակերտ

ԼՂՀ Գերագույն դատարանը՝ վճռաբեկության կարգով, կազմով՝

Նախագահությամբ՝
Դատավորներ՝

Ա.Դանիելյանի
Գ.Գրիգորյանի
Կ.Ղարայանի

Դռնբաց դատական նիստում քննելով ըստ հայցի Գագիկ Խաչատրյանի ընդդեմ ԼՂՀ մշակույթի և երիտասարդության հարցերի նախարարի՝ աշխատանքից ազատելու հրամանն անվավեր ճանաչելու և հարկադիր պարապուրդի ամբողջ ժամանակահատվածի դիմաց վարձատրությունը գանձելու մասին վարչական գործով ԼՂՀ ընդհանուր իրավասության առաջին ատյանի /այսուհետ՝ Վարչական դատարան/ դատարանի 2010թ. հունիսի 10-ի վճռի դեմ Գագիկ Խաչատրյանի վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Զ Ե Ց՝

1.Գործի դատավարական նախապատմությունը.

Դիմելով դատարան հայցվորը խնդրել է անվավեր ճանաչել ԼՂՀ մշակույթի և երիտասարդության հարցերի նախարարի 2010թ. մարտի 30-ի հմ. 5/Կ հրամանի առաջին կետը և ԼՂՀ մշակույթի և երիտասարդության նախարարությունից հոգուտ իրեն բռնագանձել միջին աշխատավարձը՝ հարկադիր պարապուրդի ամբողջ ժամանակահատվածի համար:

Վարչական դատարանը 2010թ. հունիսի 10-ի վճռով հայցը մերժել է:

Նշված վճռի դեմ վճռաբեկ բողոք է բերել Գ.Խաչատրյանը:

Վճռաբեկ բողոքին պատասխան է ներկայացրել ԼՂՀ մշակույթի և երիտասարդության հարցերի նախարար Ն.Աղաբալյանը:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում՝ ներքոհիշյալ հիմնավորումներով.

Բողոք բերողը գտնում է, որ Վարչական դատարանը չի կիրառել «Հեղինակային իրավունքի և հարակից իրավունքների մասին» ԼՂՀ օրենքի 6-րդ հոդվածը, 12-րդ հոդվածի երկրորդ մասի «ա», «դ», «ե» կետերը, 24-րդ հոդվածը, ԼՂՀ աշխատանքային օրենսգրքի 113-րդ հոդվածը, սխալ է կիրառել «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» ԼՂՀ օրենքի 14-րդ հոդվածը, 15-րդ հոդվածի երրորդ մասը:

Նշված պնդումները բողոք բերողը հիմնավորում է հետևյալ փաստարկներով.

«Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» ԼՂՀ օրենքի 14-րդ հոդվածը սահմանում է լիազոր պետական մարմնի գործունեությունը: Նշված օրենքի 15-րդ հոդվածի երրորդ մասը սահմանում է, որ պետական կազմակերպության գործադիր մարմնի պաշտոնում նշանակված անձը չի կարող զբաղեցնել այլ պաշտոն կամ կատարել վճարովի այլ աշխատանք, բացի գիտական, մանկավարժական և ստեղծագործական աշխատանքից:

Ըստ բողոք բերողի՝ իր կողմից «Հանրային հեռուստաընկերություն» ՓԲԸ /այսուհետ՝ Ընկերություն/ կատարած աշխատանքը /«Օր» լրատվական վերլուծական ծրագրի վարումը, գովազդների և հայտարարությունների ձայնագրումը/ հանդիսանում է ստեղծագործական աշխատանք, որը չի համարվում հեղինակային իրավունքի օբյեկտ, մինչդեռ Վարչական դատարանն այդ աշխատանքը չի համարել ստեղծագործական աշխատանք, դրանով իսկ խախտել է վերը նշված օրենքի նորմերը:

Բողոք բերողը գտնում է, որ Վարչական դատարանի դատական ակտը հակասում է ԼՂՀ Գերագույն դատարանի 2010թ. փետրվարի 8-ի նախադեպային որոշմանը:

Խնդրում է ամբողջությամբ բեկանել Վարչական դատարանի 2010թ. հունիսի 10-ի վճիռը և հայցը բավարարել:

3. Վճռաբեկ բողոքի պատասխանում բերված փաստարկները.

Պատասխանող կողմը գտնում է, որ վճռաբեկ բողոքն անհիմն է և խնդրում է այն մերժել հետևյալ պատճառաբանությամբ.

Ըստ Գ.Խաչատրյանի՝ Ընկերությունում նրա աշխատանքը սկսվում է «Պարարվեստի քոլեջ» ՊՈԱԿ-ում /այսուհետ՝ Կազմակերպություն/ աշխատանքն ավարտելուց հետո: Մինչդեռ դա հերքվում է Գ.Խաչատրյանի և Ընկերության տնօրինության միջև կնքված աշխատանքային պայմանագրով, որի համաձայն Գ.Խաչատրյանի աշխատաժամանակը սկսվում է ժամը 14:00-ից: Այդ փաստը արտացոլված է նաև նախարարի հմ.3/Մ Կազմակերպության գործունեության վերահսկողություն իրականացնելու մասին հրամանով ստեղծված հանձնաժողովի կազմած տեղեկանքում:

Պատասխան ներկայացնող կողմը նշում է, որ վճռաբեկ բողոքում սխալ է մեկնաբանվել «ստեղծագործություն» հասկացությունը և գտնում է, որ Գ.Խաչատրյանի աշխատանքը Ընկերությունում ստեղծագործական չէ, ուստի հրամանը հիմնավոր է և ենթակա չէ անվավեր ճանաչման:

4. Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.

1. ԼՂՀ մշակույթի և երիտասարդության հարցերի նախարարի 2009թ. հունվարի 8-ի թիվ 5/Մ հրամանով Գագիկ Համոյի Խաչատրյանը նշանակվել է «Ստեփանակերտի պարարվեստի քոլեջ» ՊՈԱԿ տնօրենի պաշտոնում:

2. ԼՂՀ «Հանրային հեռուստաընկերություն» ՓԲԸ և Գ.Խաչատրյանի միջև 2009թ. հունվարի 1-ին կնքված թիվ 106 աշխատանքային պայմանագրի համաձայն՝ Գ.Խաչատրյանն աշխատում է որպես հեռուստաընկերության հաղորդավար /շաբաթական երկու անգամ

վարելով «Օր» լրատվական ծրագիրը, իսկ մյուս օրերին մասնակցում գովազդների և հայտարարությունների ձայնագրմանը/, աշխատանքային օրվա սկիզբ է սահմանվել ժամը 14:00, իսկ ավարտը՝ 20:00-ն, պայմանագիրը կնքվել է որոշակի ժամկետով՝ 01.01.2009թ. մինչև 31.12.2009թ., ամիսը 70.000 դրամ աշխատավարձով:

3. 2010թ. հունվարի 1-ի նույն գործատուի և աշխատողի միջև կնքված աշխատանքային համաձայնագրի փոփոխված կետերի համաձայն՝ համաձայնագրի ժամկետը սահմանվել է մինչև 31.12.2010թ.:

4. ԼՂՀ «Հանրային հեռուստաընկերություն» ՓԲԸ 2010թ. մայիսի 21-ի թիվ 01-39 տեղեկանքի համաձայն՝ Գ.Խաչատրյանի հետ 2009թ. հունվարի 1-ին կնքված թիվ 106 աշխատանքային պայմանագրի համաձայն՝ նրա աշխատանքը ԼՂՀ «Հանրային հեռուստաընկերություն» ՓԲԸ-ում շարաթվա բոլոր աշխատանքային օրերին սկսվում է ժամը 17:00-ին և ավարտվում ժամը 21:00-ին, իսկ կիրակի օրը՝ 14:00-ից մինչև 19:00:

5. ԼՂՀ մշակույթի և երիտասարդության հարցերի նախարարի հրամանով ստեղծած հանձնաժողովի 2010թ. մարտի 30-ի՝ «Ստեփանակերտի պարարվեստի քոլեջ» ՊՈԱԿ գործունեության վերահսկողության արդյունքների մասին տեղեկանքում արձանագրվել է տնօրենի կողմից ԼՂՀ «Հանրային հեռուստաընկերություն» ՓԲԸ-ում համատեղությամբ աշխատելու փաստը:

5. ԼՂՀ Գերագույն դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

Վճռաբեկ բողոքի հիմքերի սահմաններում վերլուծելով գործի նյութերը՝ ԼՂՀ Գերագույն դատարանը գտնում է, որ վճռաբեկ բողոքը ենթակա է մերժման հետևյալ պատճառաբանությամբ՝

Բողոք բերողը գտնում է, որ Վարչական դատարանը թույլ է տվել նյութական իրավունքի խախտում և իր աշխատանքը Ընկերությունում չի համարել ստեղծագործական աշխատանք, ուստի գտնում է, որ Վարչական դատարանի վճիռը ենթակա է բեկանման:

Գործի նյութերով հաստատված է, որ բողոք բերողը նշանակվել է Կազմակերպության տնօրենի պաշտոնում 2009թ. հունվարի 8-ին, իսկ 2009թ. հունվարի 1-ին կնքված թիվ 106 աշխատանքային պայմանագրի համաձայն՝ Գ.Խաչատրյանը աշխատում է Ընկերությունում որպես հաղորդավար:

«Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» ԼՂՀ օրենքի 14-րդ հոդվածը սահմանում է լիազորված պետական մարմնի իրավասությունը պետական ոչ առևտրային կազմակերպությունների գործունեության կազմակերպման ոլորտում: Նշված օրենքի երկրորդ մասի «ա» կետի համաձայն՝ լիազորված պետական մարմինը՝ պետական կազմակերպության կանոնադրությամբ սահմանված կարգով իրականացնում է նրա կառավարման մարմինների ձևավորումը և նրանց լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը...: Օրենքի 15-րդ հոդվածի առաջին մասի համաձայն՝ պետական կազմակերպության ընթացիկ գործունեության ղեկավարումն իրականացնում է գործադիր մարմինը, որին նշանակում և ազատում է (նրա լիազորությունները դադարում են) լիազորված պետական մարմինը, եթե հիմնադրի որոշմամբ կամ պետական կազմակերպության կանոնադրությամբ այլ բան նախատեսված չէ, իսկ նույն հոդվածի երրորդ մասի համաձայն՝ պետական կազմակերպության գործադիր մարմնի պաշտոնում նշանակված անձը չի կարող զբաղեցնել այլ պաշտոն կամ կատարել վճարովի այլ աշխատանք, բացի գիտական, մանկավարժական և ստեղծագործական աշխատանքից:

Նշված հոդվածների մեկնաբանությունից ուղղակիորեն հետևում է, որ պետական կազմակերպության տնօրենի կողմից գիտական, մանկավարժական և ստեղծագործական աշխատանքից բացի, այլ վճարովի աշխատանք կատարելը կամ այլ պաշտոն զբաղեցնելը չի թույլատրվում:

Սույն գործով բողոք բերողի փաստարկներն այն մասին, որ Ընկերությունում նրա աշխատանքը հանդիսանում է ստեղծագործական աշխատանք՝ հիմնավոր չեն, հետևյալ պատճառաբանությամբ.

ստեղծագործական աշխատանքը՝ մարդու մտավոր այն գործունեությունն է, որն ավարտվում է որակապես նոր յուրօրինակությամբ և անկրկնելիությամբ տարբերվող հասկացությունների, գաղափարների, կերպարների կամ դրանք մարմնավորող ձևերի ստեղծման եզակիությունն արտահայտող ստեղծագործությամբ: Նշվածից հետևում է, որ ստեղծագործություն է համարվում ոչ թե ցանկացած մտավոր աշխատանք, այլ միայն այն աշխատանքը, որի արդյունքը ճանաչվում է ստեղծագործություն: Այդպիսի եզրակացության համար հիմք են ծառայում ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքի 1100-րդ և 1111-րդ հոդվածները, որոնք սահմանում են, որ մտավոր գործունեության արդյունքներ են գիտության, գրականության, արվեստի ստեղծագործությունները՝ անկախ դրանց նշանակությունից, արժանիքներից, արտահայտման եղանակներից: ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքի 1114-րդ հոդվածի առաջին մասի չորրորդ կետի համաձայն՝ հեղինակային իրավունքի օբյեկտ չեն հանդիսանում օրվա նորությունների կամ ընթացիկ իրադարձությունների մասին մամուլ տեղեկատվության բնույթ ունեցող սովորական հաղորդումները: Տեղեկատվական բնույթ ունեցող հաղորդումները հեղինակային իրավունքի օբյեկտ չեն հանդիսանում, քանի որ այս կամ այն փաստի մասին անկողմնակալ տեղեկատվությունը չի պարունակում ստեղծագործական տարրեր, ուստի և ստեղծագործական աշխատանք համարվել չի կարող:

ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-րդ հոդվածի համաձայն՝ նյութական իրավունքի նորմերը համարվում են խախտված կամ սխալ կիրառված, եթե դատարանը՝

1. չի կիրառել այն օրենքը կամ ԼՂՀ միջազգային պայմանագիրը կամ իրավական այլ ակտը, որը պետք է կիրառեր.
2. կիրառել է այն օրենքը կամ ԼՂՀ միջազգային պայմանագիրը կամ իրավական այլ ակտը, որը չպետք է կիրառեր.
3. սխալ է մեկնաբանել օրենքը կամ ԼՂՀ միջազգային պայմանագիրը կամ իրավական այլ ակտը.

Նույն հոդվածի երկրորդ կետի համաձայն՝ նյութական իրավունքի նորմի խախտումը վճռի բեկանման հիմք է, եթե հանգեցրել է գործի սխալ լուծման:

Նշված հոդվածների մեկնաբանությունից ուղղակիորեն հետևում է, որ ԼՂՀ Գերագույն դատարանը՝ ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 253-րդ հոդվածով սահմանված իր լիազորությունների շրջանակներում, բեկանում է վերանայվող դատական ակտը, և բավարարում վճռաբեկ բողոքն այն դեպքում, երբ վճռաբեկ բողոքում նշված փաստարկներն էական են գործի ըստ էության ճիշտ լուծման համար, և երբ վերանայվող դատական ակտն անհիմն և անօրինական է, և կայացվել է նյութական և դատավարական իրավունքի նորմերի այնպիսի էական խախտումներով, որոնք հանգեցրել են գործի սխալ լուծմանը:

Այսպիսով, սույն գործով հաստատված փաստերի հիման վրա ԼՂՀ Գերագույն դատարանը գտնում է, որ Վարչական դատարանի հետևությունները հիմնված են գործում առկա այն ապացույցների հետազոտման և գնահատման վրա, որոնք բավարար են գործի ըստ էության ճիշտ լուծման համար, իսկ վճռաբեկ բողոքում բերված փաստարկները գործի ըստ էության ճիշտ լուծման համար էական նշանակություն չունեն, ուստի նշված պատճառաբանությունները բավարար հիմք են հանդիսանում ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 253-րդ հոդվածի առաջին մասի առաջին կետի ուժով վճռաբեկ բողոքը մերժելու, իսկ Վարչական դատարանի բողոքարկվող դատական ակտն անփոփոխ թողնելու համար:

Ինչ վերաբերում է բողոք բերողի այն փաստարկին, որ Վարչական դատարանի վճիռը հակասում է ԼՂՀ Գերագույն դատարանի 2010թ. փետրվարի 8-ի որոշմանը, ապա ԼՂՀ Գերագույն դատարանը փաստում է, որ սույն գործի փաստական հանգամանքները էապես տարբերվում են բողոք բերողի կողմից վկայակոչած որոշման մեջ նշված վարչական գործի փաստական հանգամանքներից, ուստի վկայակոչած որոշման իրավական ձևակերպումները սույն գործով կիրառելի չեն:

Ելնելով վերոգրյալներից և ղեկավարվելով ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 253-256-րդ հոդվածներով՝ ԼՂՀ Գերագույն դատարանը,

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Գազիկ Խաչատրյանի վճռաբեկ բողոքը մերժել: ԼՂՀ ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2010թ. հունիսի 10-ի վճիռը թողնել անփոփոխ:
2. Սույն որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

ՆԱԽԱԳԱՀՈՂ՝

Ա. ԴԱՆԻԵԼՅԱՆ

ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝

**Գ. ԳՐԻԳՈՐՅԱՆ
Կ. ՂԱՐԱՅԱՆ**